

ԱՅՈՒՆԻ 3.

Պարսկարքի Երևան
գրադարան.

1865

9(47.925)
Ա-50

Կարգաբեկում
1908

\$ 2004

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՂԻԱ ՔԱՀԱՆԱՅԻ

(ԺԶ ԴԱՐՉ)

(Արտատպուած «ԱՐԱՐԱՏ» ամսագրից, 1908 թ.)

ՀՐԱՉԵԱՅ ԸՃՈՒԵԸՆ



(47925)

Ա-~~X~~

2.925)

47

2.

9(47.925)

Ա-50

2. 258... - 1/4

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Ղ Ի Ա. Բ Ա Հ Ա Ն Ա Յ Ի

(Ժ 2 Դ Ա Ր ?)

2012

29064
29



(Արտատրուած «Ա.Բ.Ա.Բ.Տ» ամսագրից, 1908 թ.)



Հ Բ Ա Չ Ե Ե Ց Ե Ճ Ա Ռ Ե Ը Ն



Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1908

12679

12

5705

Յ Ա. Ռ Ա. Չ Ա. Բ Ա. Ն

1. Աշխատութեան պատմութիւնը.—2. Ձեռագիրներուն նկարագրութիւնը.—
3. Աշխատութեան կազմութեան և բնագրի վերականգնման եղանակը.—
4. Ասորի ժողովրդին պատմութիւնը.—5. Եղիա քահանայի կենսագրութիւնը.
6. Ձեռագրին բովանդակութիւնը.—7. Նախնական վիճակն ու յետին փոփոխութիւնները.—8. Ընդարձակ խմբագրութիւնը.—9. Հեղինակը.—10. Գրութեան ժամանակը:

1. Եղիա քահանայի պատմութեան հետ ծանօթացած էի դեռ 1895 թուականին, Կարին եղած ժամանակս, երբ կը կազմէի Սանասարեան վարժարանի ձեռագրաց ցուցակը, որ նախ մաս մաս Հանդէս Ամսօրեայի մէջ տպուելէ յետոյ՝ հրատարակուեցաւ նաև առանձին գրքով 1900 թուին: Այդ ձեռագրաց թիւ 43-ն է Տէր Եղիայի պատմութիւնը, տես Յուլիան, էջ 32:

1900 թուին վերջերք՝ Էջմիածնի մէջ՝ երբ Պր. Մանանդեանի ընկերակցութեամբ կը կազմէինք մեր «Հայոց Նոր Վկաները», ձեռքս անցաւ Եղիա քահանայի ուրիշ լաւագոյն օրինակ մը՝ որ կը գտնուէր Էջմիածնի ձեռագրատան 132 թիւ համառօտ ձանձուրին մէջ: Որոշեր էինք նախ նոյն պատմութիւնն ալ անցընել մեր Նոր Վկաներու Հաւաքածոյին մէջ, բայց օրովհետև այս գրքին մէջ տեղ ունէին միայն նահատակները և ոչ խոստովանողները, ուստի մտածեցի նոյնը առանձին գրքով լոյս ընծայել:

Այդ մտածման ժամանակ Էջմիածնի ձեռագրատան մատենադարանապետ Գեր. Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանը՝ Էջմիածնի մէկ անկիւնէն, հին վաւերաթուղթերու կոյտի մը մէջ գտեր էր եօթը թուղթէ բազկացած աղտոտ տետրակ մը՝ որ տեսնելով թէ վկայաբանական գրութիւն մըն է, բարկհաճեր էր իսկոյն ինձ յանձնել: Գրուածքը նոյնպէս Եղիա քահանայի պատմութիւնն էր:

Էջմիածնի այս երկու ձեռագիրները ձեռքի տակ ունենալէ ետք՝ դիմեցի Կարին՝ Սանասարեան վարժարանի Հայերէնի ուսուցիչ Մեծ. Պր. Աստուածատուր Խաչատրեանին, ինչպէս և համար Սանասարեան օրինակին արտագրութիւնը: Յարգելի պարօնը բարի եղաւ շատ շուտ և շատ մեծ ճշտութեամբ կատարելու իմ խնդիրքս:



1901—1902 թուին սկսած էի նիւթեր հաւաքել Լիակատար Տաղարանի մը համար և այս պատճառով մի առ մի կը թերթէի էջմիածին գտնուած բոլոր ձեռագիրները: Ամբողջ Կարինեան 2383 ձեռագիրներու մէջ չգտայ Եղիայի պատմութեան տարբեր օրինակ մը. միայն երկու ձեռագիրներու մէջ տեսայ երկու աննշան հատուածներ՝ կողի վրայ գրուած՝ իրբև գրչավորձ կամ խաղալիք, որ նոյնպէս կը պատկանէին Եղիա քահանային:

Ահա այս երեք ամբողջական օրինակներու և երկու հատակոտորներու համեմատութեամբ է որ կազմուած է իմ այս աշխատութիւնս:

2. Կ'անցնինք այժմ մեր գործածած ձեռագիրներուն քննութեան:

Ձ կը ներկայացնէ այն օրինակը՝ որ կը բռնէ էջմիածնի Գէորգեան ցուցակի թիւ 132 ձեռագրին 145բ—157ա էջերը: Սոյն ձեռագիրը համառօտ և փոքր ութանկ գիրքով ձառնարկ մըն է, որուն գրիչն է «տէր Յօհան Երէց». գրուած է «ի թիվին ՌՃԻԴ ունն (=1675). նախա ամսունն ժ», նոտրագիր մաքուր գրութեամբ: Ձեռագրին գրութեան տեղը յիշուած չէ. բայց նախայ ամսունն յիշատակութենէն և Եղիա քահանայի պատմութեան մէջ գտնուած տաճկերէն բառերու ձեռն յայտնի է թէ ձեռագիրը գրուած է Նոր-Ջուղայի մէջ: Եղիա քահանայի պատմութիւնը հոս վերնագիրը չունի. բայց պատմութիւնը սկսելէ առաջ՝ ամբողջ էջ մը (այն է էջ 145^ա) պարպ է թողուած, անշուշտ յետոյ ախտոսը գրելու համար, որ մոռցուած է:

Պ ձեռագիրը 7 թուղթէ բաղկացած ազնու նոտրագիր և աննշան տետրակ մըն է, որ գտնուեցաւ էջմիածնի արխիվին մէջ Գարեգին վարդապետի չնորհիւ. սկիզբէն և վերջէն մէյմէկ թուղթ պարպ, գրուած երեսներն են ընդ ամէնը տասը էջ կամ հինգ թուղթ: Խորագիր գրուած է. «Ո՞վ կըբարք այս է տէր Եղիայ քահանային պատմութիւնն լաւ իմացէք այս է գիր որ ասէ»: Իսկ տետրակին վերջը կ'ըսուի. «Գուռն գրքով յայտնի է. ԳԻՐՔ. Որ կոչի պատմութիւնն տէր Եղիայ քահանային: Ի Հայրապետ և գերգահ արթոռոյն սբյ էջմիածնի երիցս երանեալ տն կփրեմի սբգն կաթողիկոսի ամ հայոց: Եւ ի պարգու և սբյ կէմի տն թէոգորոսի երջանկափայլ վարդպետի սբ հայոց:—Եւ մէծի մայրաքաղաքի Կոստանդնուպոլսոյ նորապսակ (երկար բառի մը տեղ բաց թողուած) արբահամու և ամ ծաբան (նոյնպէս) պարբրի: Ի թուին Հայոց ոմկդ (=1814) և ի մարտի ամսոյ նից ժգին Ա՞վ գրեցաւ ի Կոստանդնուպոլսիս ձեռամբ նուաստի մանկավարժ ոսկանի»: Ընդ ընթացքին կ'ըսուի թիւ 43 ձեռագիրն է, որ

Ս Սանասարեան վարժարանի թիւ 43 ձեռագիրն է, որ

գրուած է 1844 թուին՝ արտագրուելով 1791 թուին գրուած օրինակէ մը. ունի թուղթ 11, էջ չէ նշանակուած. մեծութիւնն է 21.5×18 սմ. նիւթն է հասարակ թուղթ. գրութիւնը նօտր և մաքուր, բայց լի սխալներով. զարդ չունի. գատարկ թուղթ 2 էջ. կազմ չունի. տող 27. Ժամանակ ՌՄՂԳ=1844 յունվար 25. գրիչն է Երեմիայի որդի Տէր Յարութիւն քահանայ, որուն աշխարհական անունն է ախրացու Համբարձու. գրութեան տեղը՝ Խարբերդ Մատեն:

Ձեռագրին առաջին երեսին վրայ գրուած է. «Տետրակ որ գուչի տէր կղիէայի պատմութիւնն Արարեալ և շարագրեալ յունմէնէն հաւատացելոց Ականատես անձնէ. ի ռամկական բաբառով զի ընդերցողք և ունկնցրողք հասկացողք ի միտ առցէն ամէն թիվն ՌՄԽԵ յունվարի Ը ին որ ի քաղաքն խորհրդ Գրվեցաւ տետրակս ՌՄՂԳ.ին. յունվարի ին որ է մատան ձեռամբ տեանն յիտուսի յետնեալ տէր յարութիւնին մեղսամած քահանայի երեսմիեանն»:

Եղիայի պատմութեան յետոյ վերջը թեր երեսին վրայ գրուած է Քուչակի ոտանաւորը, ուրիշ տողերու հետ խառնուած, այսպէս.

«Կուգես որ ազնիւ լինիս որ ամէն մարդ զքեզ սիրէ. դուն հողի նման կեցիր որ ամէն ոտք զքեզ կոխէ. քանզ զերկաթն ամուր մի լինիր որ զկրակն կու հալէ դու ջրի նման կղիր որ զկրակն կու մարէ. զեղեցիկ նազելի կըբայր պատվական. իւրապիմտայ տէրում վար տը համ կարամ. ուսոյ ինձ իմաստութիւն յարածամ. թօյպէ տէյիմ փեք տուչկուն ամ. պիր տէրման. չէֆահաթ էյյասին օրհնեալ մարիամ տացէ ըզձան երկնից քաղցրութեան համբաշումս խընդրէ ըզնուն օրհնեալ ձայն մեղայ ասեմ փեք տուչկունում պիր տէրման վերջ»:

Վերջին երեսին վրայ, յիշեալ ոտանաւորէն անմիջապէս յետոյ գրուած է.

«Քրվեցաւ տետրակս ի քաղաքն մատեն և է ձեռամբ տեանն յիտուսի ծառայ յետնեալ համբարձումին և հորն իմոյ երեմիային և ամէնայն զարմից և զաւակացն ընթերցողք և ունկնցրողք զողորմիս մի ասէ միով հայր մէղայիւ յիշէ աստուած ողորմի իւրեանց և իւր նշնջեցելոցն հողիքն ամէն Այս տետրակս ախրացու համբարձումին և հորն նորին երեմիային և մօրն նորա խաչերին կըբորն առաքելին և քրոջն նազուլին կընոջըն ալթունին և որդուն արբահամին աստուած բարի վայելում տացէ խորին ձերութեանը հասուցէ Ամէն»:

Դ ութը տողէ բաղկացեալ հատուած մըն է, որ կ'սկսի համար 18 «տանջմաները թէ նէ տէրոսիսիզ» մինչև համար 21 «Եւ

թէ որչափ զխօսն» (այլափոխակ). Կը գտնուի էջմիածնի Կարինեան 1791 թիւ ձեռագրին 211-էջը, իբր պարսպ էջի վրայ եղած երկրորդական գրչափորձ կամ խաղալիք. բուն ձեռագրին է Պղնձէ քաղաք են, գրութեան թուականը անյայտ:

Ե յիսուն և եօթը տողէ բաղկացած հատակոտոր մըն է (համար 96—111). Կը գտնուի էջմիածնի Կարինեան թիւ 1386 ձեռագրի վերջին էջը (524 բ) իբր գրչափորձ կամ խաղալիք երկրորդական գրչէ մը. շատ տգեղ և խիստ գծուարընթեռնի գրութիւն մըն է: Բուն ձեռագիրը «Սարգսի Ծնործալուոյ մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց», գրուած է Կաֆա քաղաքը. գրիչը և թուականը անյայտ է. բայց կաղմին նորոգութեան թուականն է ՌՃԺԹ=1670:

3. Ի նկատի չունենալով վերջի երկու հատակոտորները մնացեալ երեք ամբողջական ձեռագիրներուն մէջ ընտրելագոյնն ու հնագոյնը Ջ ձեռագիրն է, գրուած 1675-ին. գրիչը եղած է հմուտ մէկը. տառասխալներ չկան. ունի մաքուր գրութիւն. միւսներէն զանազանութիւն մը ցուցուցած պարագաներու մէջ անգամ կ'արգարանայ և իբր ճշտագոյն կը ներկայանայ բանասիրական քննութեան առջև. այնպէս որ մեր աշխատութեան մէջ առհասարակ հետեցանք այս օրինակին. երբ իրեն հետ կը համաձայնէր միւս ձեռագիրներէն մէկը (Պ կամ Ս)՝ այս բանը բնական էր. բայց նոյն իսկ շատ տեղ երբ Ջ մինակ կը մնար Պ և Ս ձեռագիրներու նման ընթերցուածներու դէմ, պէտք եղաւ ընտրել Ջ ձեռագրին ընթերցուածը:

Պ գրուած ըլլալով Պօլսոյ մէջ և աւելի ուշ ժամանակ (Ջ-էն 139 տարի յետոյ) կրած է աւելի շատ ձեւփոխութիւն. ձեռագրին մէջ աշխատուած է լեզուն կարելի եղածին չափ մօտեցնել Պօլսոյ աշխարհաբարին. այս պատճառով կը բռնէ Ջ և Ս ձեռագիրներու մէջտեղը: Իր տարբերութիւնները յիշելու ժամանակ աւելորդ համարեցինք յառաջ բերել զորոշակաւ տառասխալները. օրօրօն փոխանակ ըսելու հարկ են:

Ս գրուած է Խարբերգի մէջ, այսինքն հոն, ուր կատարուած են Եղիայի անցքերը և ուր անշուշտ շարագրուած է պատմութեան բնագիրը. բայց նոյն իսկ այս պարագաները պատճառ եղեր են ձեռագրին չափազանց այլափոխութեան. Հարկաւ Եղիայի պատմութիւնը շատ տարածուած էր Խարբերգի մէջ և շատ անգամ արտագրուած. ամէն արտագրող իր կողմէն աւելցուցած էր ինչ որ իրեն լաւ էր թուած. այնպէս որ մօտ երկու դար յետոյ հարկաւ Ս մեզ պիտի ներկայացնէր այն վիճակը՝ ուր այժմ կը տեսնենք. զուրջ յապաւումներ, յաւելուածներ, և գրեթէ միշտ վերածուած:

այլաբարբարի: Ասոր վրայ աւելցնենք նաև այն որ Յարութիւն քահանային տղիտութիւնը աներեակայելի աստիճանի է հասած. Է-ով բացառական, օ-ով գործիական, Է-ով յոգնակի, «-պէյ ևն ձևով անկատարներ կը կազմեն իւր գրութեան սովորական ձևը: Ս-ի այս տառական սխալները մենք չենք նշանակած միայն այն ժամանակ՝ երբ բառը համաձայն կը մնար մեր կազմած բնագրին հետ. բայց տարբեր ընթերցուածները միշտ նշանակած ենք իւր ուղղագրութեամբ:

Այսպէսով եթէ բնագրին հայերէն մասերուն հարադատութեան մէջ առաջին տեղը կը բռնէր Ջ, երկրորդը Պ և երրորդը Ս, ասոր ճիշտ հակառակն էր թուրքերէն բառերու և խօսքերու մէջ: Եղիա քահանան իբրև Խարբերգի՝ անշուշտ պիտի խօսած լինէր Խարբերգի թուրքերու արտասանութեամբ. կամ գոնէ բնագիրը շարագրողները տեղական բարբառով պիտի գրած լինէին. այս մտածմամբ, Ս որ Խարբերգի մէջ գրուած է, պիտի ներկայացնէր լուսագոյն ընթերցուածները. Պ գրուած է Պօլսական արտասանութեամբ, որ իբրև Տաճկաստանի բարբառ՝ աւելի մօտիկ է Խարբերգի լեզուին. մինչդեռ Ջ՝ որ գրուած է Նոր-Ջուղայի մէջ, գործածած է Ատրպատականի թուրքերէնը, որով և բաւական կը հեռանայ երկուքէն ալ, երբեմն միայն միջին տեղ մը բռնելով:

Մեր բնագիրը կազմելու համար մենք ալ շարժեցանք այս երկու իրարու հակառակ ուղղութեամբ:

Ընթերցողներու դիւրութեան համար ամէն այլափոխութիւնը հետ կցեցինք իր հայերէն թարգմանութիւնը:

Աւելցնենք վերջապէս թէ բնագրին միահետ գրութիւնը մենք բաժնեցինք համարներու. իսկ գլուխներու բաժնել պէտք չեղաւ՝ գրուածքին կարծութեան համար: Գործին վերջն ալ գրինք Յատուկ Անուններու Յանկ մը և բնագրին մէջ պատահած օտարազգի բառերու բառարան:

Կը մնայ մեզ ընել բանասիրական համապատ քննութիւն մը՝ Տէր Եղիայի անձին, պատմութեան, ասոր գրութեան և ժամանակին ու հեղինակին մասին:

4. Ասորոց ազգը երկու քրիստոնէական ինքնուրոյն համայնք կը կազմէ. նախ Նեստորական եկեղեցին, որ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն կողմէն հերձուածող համարուած է, և երկրորդ՝ Յակոբիկ Ուղղափառ եկեղեցին, որ Հայաստանեայց եկեղեցւոյն հետ ամէն ժամանակ ունեցած է փոխադարձ շատ սիրալիր վերաբերմունք, պէտք ունեցած ժամանակ գտնելով նաև օգնութիւն և պաշտպանութիւն: Այժմ Միջագետքի, Քիւրդիստանի, Հայաստանի և Պարսկաստանի մէջ հոգ ու հոն ցրուած ասորի ազգը նախապէս

կը կազմէր առանձին ազգութիւն, որուն հայրենիքն էր Ասորիքը՝ Միջերկրական ծովի եզերքը գտնուած այդ փոքրիկ երկիրը։ Երբ Ասորիները խմբովին ընդունեցին նեստորականութիւնը՝ ենթարկուեցան մեծամեծ հալածանքներու Յունաց կողմէ, այնպէս որ ստիպուեցան փախչիլ իրենց մայր հայրենիքէն և ապաւինելով Պարսից աէրութեան՝ պաշտպանութիւն խնդրեցին անոնցմէ՝ Յունաց գէմ։ Պարսիկները իրենց հովանաւորութեան տակ առին զանոնք, և մեծ պաշտպանութիւն ցոյց տուին՝ հակառակ Յոյներուն։ Այդ ատենէն Ասորիները սկսան զաղթել և տարածուիլ Միջագետքի, Պարսկաստանի և մինչև Արաբիոյ մէջ (435 Յ. Ք.)։ Աւելի յետոյ նորա յառաջացան Արևելեան Ասիոյ մէջ՝ մինչև Չինաստան, ուր հիմնեցին նեստորական եկեղեցի։ Առաջին անգամ Լանկթամուր (1336—1405) կործանեց նեստորական եկեղեցին՝ գրեթէ բովանդակ Ասիոյ մէջ. մնացորդները ևս քաշուեցան և ապաստանեցան Քիւրդիստանի լեռները։ Այս նորեկ Ասորիներուն մէջ յատկապէս կը յիշուի Զուլամէրկի մէջ հաստատուած լեռնաբնակ գաղթականութիւնը, որ մինչև այժմ կիսանկախ ժողովուրդ մը կը կազմէ։ Ասոնք բոլոր նեստորական են. ունին առանձին պատրիարք՝ որ կը կոչուի Մար-Շիմոն, և է նաև մարմնաւոր պետ իւր ժողովրդեան։

Այն Ասորիները՝ որ մնացին Ասորիքի մէջ և իրենց հայրենիքէն չհեռացան, չկրցան իրենց գոյութիւնը երկար պահպանել. սոնք ալ Արաբներու տիրապետութեան տակ ինչալով արաբացան, և մահմետական կրօնն ու արաբերէն լեզուն ընդունելով՝ ձուլուեցան Արաբներու մէջ։

Ասորիներու հետ պէտք չէ շփոթել Ասորեստանցիները։ Ասորեստանը առանձին երկիր է, որ Բաբելոնացիներու հետ հին ժամանակ կը կազմէր մեծ պետութիւն. ունէր երկու հռչակաւոր քաղաքներ՝ Բաբելոն և Նինուէ։ Ասորիներն ու Ասորեստանցիները տարբեր ազգեր են, ինչպէս որ Ասորիքն ու Ասորեստանը տարբեր երկիրներ են։ Ասորեստանցիք ևս ունեցան իւր ձևով իւր ժողովուրդն. սոնք նախ դարձան արամայեցի, յետոյ ալ արաբացան ասորիներու նման։

Ըստ այսմ Պարսկաստանի և Քիւրդիստանի մէջ այժմ գոյութիւն ունեցող Ասորիները Ասորեստանցիներու յաջորդները չեն, այլ Ասորոց. իրենց լեզուն ասորեստաներէն չէ, այլ կը ծագի հին ասորերէնէ, որուն մէկ նոր բարբառն է և անոր հետ ճիշտ այն յարաբերութիւնն ունի՝ ինչ որ այժմեան հայերէն բարբառ մը՝ գրաբարի հետ։ Պարսկաստանի Ասորիներէն ոմանք (մինչև իսկ ուսումնականներ) զիրենք կը համարեն Ասորեստանցոց յաջորդներ. բայց այս կարծիքը բացարձակ սխալ է 1)։

1) Ասորիներու մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ կարելի

Լանկթամուրի հալածանքներէն փախչող կամ նախկին գաղթականներու խումբին կը պատկանին նաև Հայաստանի Յակոբիկ ասորիները։ Ասոնցմէ մէկ-երկու հարիւր տուն ժողովուրդ կայ այժմ Խարբերդի մէջ, որոնք ունին առանձին եկեղեցի, բայց իրենց լեզուն մոռցած ըլլալով՝ կը խօսին հայերէն. շատ անգամ՝ մանաւանդ օտարներու առջև՝ զիրենք կը կոչեն հայ անունով. բայց այս բան աւելի «քրիստոնեայ» նշանակութիւնն ունի, քան «հայազգի», ինչպէս որ Տիգրանակերտի բոլոր քրիստոնէական ազգութիւններն ալ (Եաղուպի, Քիլտանի, Խպտի, Մարոնի են) զիրենք կը համարեն «հայ», իբրև հակազիր «մահմետական» հասարակաց անունին։

5. Ահա այս Յակոբիկ ուղղափառ Ասորիներէն է մեր Տէր Եղիան, որ բնիկ Խարբերդցի և նոյն քաղաքի Տիրամայր Ա. Աստուածածին ասորի եկեղեցւոյն քահանան էր (տես համար 6, 15 և 23). ասորերէն լեզուով կը կոչուէր Բապան էլիա (22)։ Այս անձը իւր ժամանակի անուանի անձերէն մէկն, «ի մէջ աշխարհի անուանի» էր (154). երկու անգամ՝ ուխտագնացութեան էր գացած Երուսաղէմ, Քրիստոսի զերեղմանը համբուրելու համար (154), ուստի և կը կոչուէր «մահտեսի Տէր Եղիա քահանայ» (1)։ Կ'երևայ թէ հոգևոր որդին կամ աշակերտն էր Մկրտիչ վարդապետին, որովհետև այս երկուքը առանձնապէս կապուած են իրարու հետ։ Առաջին անգամ երբ տաճիկները կ'ուզէին Եղիան մահմետական դարձնել և պայմանաւորուեցան վիճարանիլ, նոյն տեղը ներկայ էին Մկրտիչ վարդապետը Յովհաննէս Եպիսկոպոսի հետ (35)։ Այնուհետև մինչև վերջ կ'երևայ նա. երբ հսկում և պաշտօն կատարելու համար Տէր Եղիան ժողովրդին հետ գնաց Ասորոց եկեղեցին, Եղիան Մկրտիչ վարդապետի աջը կը համբուրէ (42) և վարդապետը կ'օրհնէ զայն (43)։ Ասկէ կ'երևայ նաև որ Մկրտիչ վարդապետը Ասորոց Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն քարոզիչն ըլլալու էր՝ նայնպէս Եղիա քահանային բանտարկութեան ժամանակ խնձորի մէջ Ա. Հաղորդութիւն զնելով ծածուկ քահանային ուղարկողը Մկրտիչ վարդապետն է (151), ուր և իւր որդին կը կոչէ Տէր Եղիան։ Թուրքերը երբ կ'ուզէին քահանային արևան գինը կտրել և ծախել՝ սակարկելու համար քահանաներուն հետ կանչեցին Մկրտիչ վարդապետը (166). և Մկրտիչ վարդապետն է որ հնարագիտութեամբ ծածուկ փոխառութիւն մը հայթայթեց և փրկեց Տէր Եղիան (169)։ Ասոնց մէջ քանի մը տեղ մեր գրուածքը յայտնապէս կը յիշէ

է քաղել նորատիպ ամփոփ աշխատութենէ մը. A. Sanda, die Aramäer (aus der alte Orient, IV № 3) Leipzig. վերի տեղեկութիւնները համաձայն ուսուցչին հայագետ Հիւլալմանի մէկ նամակէն։

Մկրտիչ վարդապետի անունը, բայց քանի մը տեղ ալ միայն «վարդապետն» ըսելով կը բաւականանայ: 169 համարին մէջ Մկրտիչ անունը չէ յիշուած, բայց Ս ձեռագրին ընթերցուածներուն մէջ յայտնապէս կ'ըսուի «յետոյ Մկրտիչ վարդապետն...»: Դարձեալ հմ. 22 Եղիան «զայս մեր հոգևոր որդին» կը կոչուի. և այս խօսքը ըսողը, որ գրութեանս հեղինակն է, հաւանական է որ Մկրտիչ վարդապետն ըլլայ:

Բոլորովին պարագ առողջ չէ որ զրուածքիս մէջ Եղիա քահանան իբր «անուանի» մարդ ցուցուած է. ապահովապէս նա աւելի հմուտ էր քան իւր քաղաքակից Յովհաննէս, Մինաս, Խաչատուր, Պօղոս և Մելքիսեթ վարդապետները: Նա տեղեակ էր ըստ մեր գրուածքին (41, 172) չորս լիզուի, այն է արարերէն, ասորերէն, մարոներէն (արաբերէն բարբառ) և հայերէն. բայց հոս պէտք է աւելցնել նաև տաճկերէն, որ հեղինակը չէ յիշած իբր յայտնի և բնական բան. ինչպէս նաև երբայեցերէն, որու մէջ գոնէ չափաւոր գիտութիւն մը ունեցած պիտի ըլլար Եղիա, քանի որ համար 95 երբայեցերէն վկայութիւն մը կը բերէ: Եղիան ծանօթ էր մահմետական կրօնական գրականութեան, այնպէս որ իւր վիճարանութեան ժամանակ քանի քանի անգամ ասոնց գրուածքներէն այլ և այլ հատուածներ վկայութեան կը կոչէ: Ծանօթ է հին ֆէթվաներուն, որոնցմէ մէկ երկուքը կը յիշէ (83, 87). կարդացած է Փամուսը, զոր կը յիշէ հմ. 115 և Մահմետականներուն Թէվրաթ-Նըսըրը, որուն չորրորդ գլուխը վկայութեան կը կոչէ (122): Առանձինն յիշելու է երեք մահմետական գրքեր, այն է Մուսհաֆ, որ Սարգիս Պուխարացոյն (արարերէն Ռապանի Պէխիրա) աշխատութիւնն է. երկրորդ Ապուղուրան՝ որ Մամուն խալիֆային գիրքն է. և երրորդ Շարահաթլաման՝ որ Մուհամմէտ Իսմիլի Հաշումի աշխատութիւնն է: Այս գրքերը քանի մը անգամ կը յիշէ Եղիան և Ապուղուրանի 15-րդ և Շարահաթլամայի 12 րդ գլխէն վկայութիւն կը բերէ (հմ. 81, 86, 88, 97, 98, 99), բնագիր կամ թուրքերէն թարգմանութեամբ: Վիճարանութեան համար հետը ատեն տարեր էր Մուսհաֆը (44), որմէ և վկայութիւններ բերեր է նոյն ատենին առջև (65, 128): Կը յիշէ նոյնպէս մահմետական նախկին գենապետներու, այսպէս Ալիի, Համզայի, Ապուպէքրիի, Օմարի, Օսմանի, Հասանի և Հիւսէյինի դաւանութիւնները: Արաբերէն լիզուի գիտութեան չափը ցոյց տալու համար կրնայ յիշուիլ 95, 110, 114, 117 համարներուն մէջ բերուած գուտ արաբերէն խօսքերը՝ որոնք մինչև իսկ հայերէնէ թարգմանուած են:

6. Խարբերքի մէջ քրիստոնեաները (հայ և ասորի) ունէին վեց եկեղեցի. տաճիկները նախանձելով ասոր վրայ, կ'ուզեն ա-

սոնցմէ երեքը խլել, այն է Հայոց Ս. Ստեփաննոս, Ս. Կարապետ և Ասորոց Ս. Աստուածածին եկեղեցիները, առաջին երկուքը շտեմարան, իսկ վերջինը մզկիթ և վարժարան գարձնելու զիտաւորութեամբ (4, 6, 171): Ս. Ստեփաննոսի քահանան էր Տ. Սահակը, Ս. Կարապետինը Տ. Ղուկաս. տաճիկները կանչելով այս երկուքը՝ հնարքով մը ասոնց բերնէն մահմետական դաւանութեան խօսքեր կ'առնեն և կը բանտարկեն տաճկցիներու համար: Երբ այս հնարքը կ'ուզեն գործ դնել նաև Ասորոց Եղիա քահանային վրայ ալ, սա կը պայմանաւորուի անոնց հետ՝ վիճարանի կրօնական խնդիրներու առթիւ՝ իսլամներու բոլոր ուսեալ կրօնաւորներու հետ, այն պայմանով որ երբ յաղթէ թէ եկեղեցիները և թէ քահանաները ազատ մնան (34): Պայմանը կ'ընդունուի և վիճարանութիւնը տեղի կ'ուեննայ: Եղիան մէջ կը բերէ բազմաթիւ վկայութիւններ Աւետարանէն, բայց մանաւանդ մահմետականներու գրքերէն և արաբական այբուբենէն, և միջնադարեան վարդապետական ոճով վաստաբանելով՝ կը շահի գատը: Ասոր վրայ բարկանալով մահմետականները, նոր հնարքի մը կը գիմեն և Եղիան բանտարկելով՝ կ'սկսին շարժարել մահմետական գարձնելու համար: Եղիան մինչև վերջը կը զիմազդէ: Վերջապէս մահմետականները տեսնելով թէ ի զուր է ամէն բան, արեան գին կը կտրեն և 740 զրուշ (=այժմ 156 ֆրանք) ստանալով՝ ազատ կ'արձակեն Եղիան: Այնուհետև Եղիան կ'երթայ Մէրսին, Տիգրանակերտ և Պոլիս, տաճկաց մեծերէն կ'ստանայ ֆէրմաններ, որոնց զօրութեամբ տաճիկներն այլ ևս Հայոց հոգևոր գործերուն չպիտի խանութին: Այս բոլոր ծախքերու պատճառաւ Եղիան կ'իյնայ յետին աղքատութեան մէջ, որուն համար Ասորոց պատրիարքն ու տեղացի հինգ վարդապետները կը գրեն օրհնութեան կոնդակ մը և կը յանձնեն Եղիային՝ այլ և այլ տեղեր չըջելով հանգանակութիւն ընելու համար (176 են):

7. Ահաւասիկ յիշեալ Եղիա քահանային յանձնուած օրհնութեան և հանգանակութեան պատմական կոնդակն է մեր ներկայ ձեռագիրը, որ նախապէս կը կոչուէր «նամակ», ինչպէս կը յիշուի 164 համարին մէջ, այսպէս. «Եւ այլ բազում վիշտս և նեղութիւնս հասուցին, զոր ոչ գրեցաք ի յայս փոքր նամակս»: Բայց այս նամակ բառով ալ պէտք է հասկնալ կոնդակ:

Այսպէս ըլլալու ապացոյց են գրուածքին սկիզբն ու վերջը գրուած այն խօսքերը՝ որոնք կոնդակներու կամ նման օրհնութեան գրքերու սովորական բանաձևներն են, ուր կոնդակագիրը կը գիմէ ժողովրդին, կը ներկայացնէ խնդրի նիւթ եզոզ անձը և կը վերջացնէ իւր խօսքերը օրհնութեամբ և բարեմաղթութիւններով: Այսպէս մեր ներկայ ձեռագիրն ալ կ'սկսի. «Եւ ընդ օրհնութեանս»

ծանուցումն լիցի ձեզ՝ Բրիստոսի արեամբ դնեալ քահանայք և ժողովուրդք...» յետոյ երկրորդ զէմբով կը ներկայացնէ Եզրիա քահանան. «Վասն այդ մահաւետի տէր Եզրիայ քահանայիդ որ է որ ի քաղաքէն Սարրերգու և յազգէն Յակոբայ ուղղափառ Ասորոյ... (1)»։ Ամբողջ պատմութիւնը պատմելէ յետոյ հմ. 176 կ'սկսի խօսիլ հանդանակութեան մասին. «Զայս ամենայն չարչարանս և զնեղութիւնս կրեաց վասն անուանն Բրիստոսի: Եւ վասն այդ պատճառիդ չրջի ի դրունս ողորմածացդ՝ խնդրել զողորմութիւն ի սիրելեացդ Աստուծոյ: *Դուք այլ վասն սիրոյն Բրիստոսի և յուսոյ արքայութեանն արարէք դմայ ողորմութիւն, որ դա մեծ քաջութիւն արար և ուրախացոյց զքրիստոնեայնս: *Բայց դուք մի ձանձրանայք, զի հաւատոց զին է, և այլ բանի չի նմանիր (176—178)»։ Ամէնքէն վերջը հմ. 184 համառօտ օրհնութիւն մը. «սոցին օրհնութիւնն հանապազ ընդ ձեզ և ընդ մեզ և ի վերայ ամենայն քրիստոնէից. ամէն»։ Ասոր հետ հմմտ. նաև աւելի երկար օրհնութիւն մը հմ. 181—182, որուն վրայ քիչ յետոյ:

Կոնդակը յետագայ ժամանակներու մէջ իբր պատմական գրուածք իւր արժանիքը պահելով և դառնալով պարզապէս «Պատմութիւն Տէր Եզրիա քահանային»՝ հետզհետէ զրկուեր է այն կոնդակային արտաքին ձևերէն, զորոնք կը կրէր առաջ. նախ կոնդակին սկիզբէն յապաւուեր են այն տողերը, ուր պիտի գտնէինք սովորական բանաձևներն ու օրհնութիւնները: Այնպէս որ այդ օրհնութիւնը կը ճատուելով՝ այժմ կոնդակը բոլորովին յանկարծակի ձևով կ'սկսի «Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի ձեզ» բառերով, ուր «Եւ ընդ օրհնութեանս» և «ձեզ» բառերը դեռ ցոյց կուտան առաջուան օրհնութիւնը և կոչումը:

Կոնդակին միջին մասը՝ որ միայն պատմական և վիճաբանական խնդիրները կը պարունակէ, պահուած է. աւելի փոփոխուած է վերջին մասը՝ այն է 175 համարին վերջէն, կամ 176 համարին սկիզբէն մինչև վերջ, որ կ'անդրադառնայ հանդանակութեան խնդրին և օրհնութեան վրայ: Ամէնէն համառօտն է այս մասին՝ Ս՝ որ 175 համարին վերջը իրմէն կարճ յաւելուած մը գնելով կը վերջացնէ այսպէս. «ապա զազատութիւն ստացաւ, ողջացաւ ի վիրացն և զկեանս բարերարութեամբն անցոյց: Ազատարարն Բրիստոս զձեզ և զմեզ այնպիսի փորձանաց փրկեալ ազատեսցէ. քանի որ աստի ենք՝ խաղաղ կենօք պահեսցէ. և աստեացս ելանելով զերկնից արքայութիւն պարգևեսցէ և իւր օրհնեալ տեսուն արժանիս արասցէ. ամէն»:

Այնուհետև ԶՊ միասին կ'երթան, քիչ անգամ միայն շեղելով բնագրէն. Պ ձեռագիրը 176 համարին մէջ երկրորդ զէմբով գրուած բառերը՝ որ ժողովրդին զիմում կը ցուցնեն, կը ջնջէ և կը վերածէ

ընդհանուր պատմական ձևի. ինչպէս. «ի դրունս ողորմածացդ» կը դարձնէ «ի դունս դունս ողորմածին»։ «խնդրել զողորմութիւն ի սիրելեացդ Աստուծոյ» կը վերածէ «... ի սիրելեայն Աստուծոյ»։ 177 համարէն կը զեղջէ «Դուք այլ վասն սիրոյն Բրիստոսի և յուսոյ արքայութեանն արարէք դմայ ողորմութիւն»։ բայց կը պահէ «որ դա մեծ քաջութիւն արար և ուրախացոյց զքրիստոնեայնս»՝ տալով միայն ընդհանուր ձև. «դարձեալ այս տէր Եզրիայն մեծ քաջութիւն արաւ և ուրախացոյց զքահանայքն և վարդապետքն և ժողովուրդքն քրիստոնէից»։ 178 համարէն կը կտրէ «բայց դուք մի ձանձրանայք, զի հաւատոց զին է և այլ բան չի նմանիր»:

Սկսեալ 180 համարէն Զ և Պ խապառ կը հեռանան իրարմէ. Զ պահելով ձեռագրին նախնական ձևը «Եւ երիցակինն այլ այս ձանապարհս առ Աստուած փոխեցաւ. Աստուած ողորմի ասացէք իւր հոգոյն. ամէն (Քի. 180—182 համարներուն)», կը վերջացնէ «կատարեցաւ են» (տես 183, 184 հմ.): Իսկ Պ կը ջնջէ «կատարեցաւ են» վերջարանութիւնը, իրմէ կը չարադրէ հմ. 181 և 182 աղօթքը՝ որ առաջին զէմբով լինելով՝ պարզ կը ցուցնէ թէ գրողին կողմէն է, և վերջապէս կը ձևափոխէ 180 համարը. «Այսպիսի քաջարարութեամբ պնդեաց ի սիրտ քահանային առ Աստուած և ազատեցան ամենայն քրիստոնեայք ողորմութեամբն Աստուծոյ. և այսպէս բարի ձանապարհաւ առ ի կեանս փոխեցան»:

Այս 180—182 համարները թէև Պ-ի կողմէն են յարմարուած և բնագրէն չեն, բայց և այնպէս մենք մտոցցինք բնագրին մէջ:

Թէ Պ և Ս կը հեռանան բնագրէն՝ յայտնի է նաև անկէ որ մինչդեռ կոնդակը գրուած է Եզրիա քահանայի կենդանութեան ժամանակ և տրուած է նոյն իսկ իւր ձևը՝ ողորմութիւն խնդրելու համար (բան մը որ Պ ալ կ'ընդունի հմ. 176), այնու ամենայնիւ ՊՍ այնպէս մը կը պատմեն որ իբր թէ Եզրիա քահանային վախճանէն վերջը գրուած ըլլար իբր կենսագրութիւն: Ս հմ. 175 կը գրէ «ողջացաւ ի վիրացն և ըզկեանս բարերարութեամբն անցոյց»։ Աւելի որոշ է Պ, որ հմ. 180—181 Եզրիա քահանայի և իւր երէցկնոջ համար կ'ըսէ. «և այսպէս բարի ձանապարհաւ առ ի կեանս քիչեցան. որք բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի...»։ Սակայն ստոյգն այն է որ վախճանած է միայն երէցկնոջ, ինչպէս ունի Զ հմ. 180:

8. Եզրիա քահանայի պատմութիւնը, այնպէս ինչպէս կը հրատարակենք այժմ, կրնայ կոչուիլ համառօտ խմբագրութիւն. սակայն նա պիտի ունենար նաև ընդարձակ խմբագրութիւն մը, ինչպէս կը ծանուցուի 164 համարին մէջ. «Եւ այլ բաղում վիշտս և նեղութիւնս հասուցին, զոր ոչ գրեցաք ի յայս փոքր նամակս»:

ապա ի մեծ նամակն գրեալ կայ: Այս յիշատակութենէն կ'երևայ որ ընդարձակ խմբագրութեան կամ «մեծ նամակի» մէջ պիտի գտնուէին նաև այն բաղում վիշտերը և չարչարանքները, որոնց ենթարկեցին մահմետականները Եղիա քահանան՝ իրենց կրօնին դարձնելու համար:

9. Ձեռագրին վերջը յիշուած են խումբ մը վիաներ, այսպէս. «Կատարեցաւ բանքս այս վկայութեամբ Ասորոց պատրիարքին և Մինաս վարդապետին և Խաչատուր վարդապետին, Պօղոս վարդապետին և Յովանէս վարդապետին և Մելքիսէթ վարդապետին» (հմ. 183): Այս անձերը, որ Խարբերդի և շրջակայից յայտնի հոգեօրականներն են (հայ կամ ասորի), պատմութեան ստուգութեանը վկայող երաշխաւորներ են: Բայց պատմութեան ընթացքին մէջ յիշուած են նաև երկու կրօնաւորներու անուններ, Յովհաննէս և Կալիսիոսը և Մկրտիչ վարդապետ (35), որոնք ներկայ եղած էին նաև ատեանին մէջ: Չարմանալի է սակայն որ ասոնց ստորագրութիւնը չկայ կոնդակին վկաներուն մէջ: Աւելի զարմանալի է Եղիա քահանայի ուսուցիչ Մկրտիչ վարդապետինը՝ որ այնքան գործօն դեր է ունեցած Եղիայի նոյն վէճին առթիւ, ինչպէս նկատեցինք վերը թիւ 5: Բայց նոյն իսկ այս կէտը ինձ կարծել կուտայ թէ գրութեան հեղինակ են նոյն Յովհաննէս և Կալիսիոսը և մանաւանդ Մկրտիչ վարդապետը՝ Ասորոց եկեղեցւոյն քարոզիչը, թերև և ասորի, որուն համաձայն կուգայ հմ. 2) «զայս մեր հոգեօր որդին» ըսելը Եղիա քահանայի համար: Միւս ստորագրողները չենք կրնար հեղինակ համարել նոյն իսկ հմ. 184 գրուած պարզ վկայութեան պատճառաւ, ուր կ'ըսուի թէ «Սոցին օրհնութիւնն (այն է ստորագրողներուն) հանապազ ընդ ձեզ և ընդ Տեղ և ի վերայ ամենայն քրիստոնէից»: Եթէ ստորագրողները հեղինակներն ըլլային, անկարելի էր հոս ընդ Տեղ ձեռք, որով ստորագրողները իրենց օրհնութիւնը իրենց վրայ հրաւիրած պիտի ըլլային: Պարզ է թէ հեղինակը պէտք է որ այստեղ ներկայ եղող անձերէն զուրս մէկն ըլլայ, և այդ կէտը շատ յարմար կերպով կը լրացնէ Մկրտիչ վարդապետը: Ուրեմն ստորագրողները պարզապէս վկաներ են:

Կ'երևայ նաև թէ գրութեան մէջ մաս ունի նոյնպէս Եղիա քահանան, յատկապէս վիճաբանական այլալիզու հատուածներուն մէջ. եթէ չենթադրենք թէ Մկրտիչ վարդապետը՝ իբրև Եղիայի ուսուցիչը՝ կրնար գիտնալ նոյնպէս տաճկերէն, արաբերէն և երբայեցիկէն լեզուները և միաք պահել Եղիայի մէջ բերած պատճառաբանութիւնները:

10. Ե՞րբ է Եղիայի պատմութեան թուականը.— Այս խնդիրը պարզելու միջոցներն առ այժմ կը պակսին մեզ: Եթէ յիշուած լինէր Ասորի պատրիարքին անունը, որ ի հարկէ Յակոբիկներու պատրիարքն է (տես հմ. 183), քանի որ նստորականները անիծուած են հմ. 47, դաւազանագրոց օգնութեամբ կարելի կ'ըլլար գտնել ստոյգ թուականը:

Բայց կան երկու կէտեր՝ որոնց միջոցով՝ Խարբերդ գտնուող բանասէր մը կարենայ թերևս մօտաւոր թուական մը գտնել. այն է նախ Խարբերդի եկեղեցիներու թուականը: Ձեռագիրը կ'ըսէ թէ Խարբերդի մէջ այն ժամանակ կար ընդ ամէնը վեց եկեղեցի, որոնց երեքին անունն ալ կուտայ, Ս. Ստեփաննոս, Ս. Կարապետ (Հայոց) և Ս. Աստուածածին (Ասորոց). (տես հմ. 4, 6): Եթէ Խարբերդի այժմեան եկեղեցիներուն թիւը տարբեր է, աւելցուած նորագոյն եկեղեցիներուն շինութեան կամ պակասներուն քանդման թուականը, իսկ եթէ նոցա այժմեան թիւը հաւասար է հինն, առնոցմէ նորագոյնին շինութեան թուականը կրնան եզր ըլլալ Տ. Եղիայի պատմութեան թուականին, ի հարկէ միշտ ի նկատի ունենալով նոյն եկեղեցիներու պատմութիւնը: Երկրորդ՝ եթէ գտնուին հմ. 183 յիշուած կրօնաւորներու կամ Տէր Եղիայի գերեզմանաքարերն ու մահուան թուականը, ամէն բան կը պարզուի:

Սակայն ամէն պարագայի մէջ գրուածքին գրութեան եզրը 1675 թուէն ասդին չէ, որովհետև այս թուականին է գրուած մեր առաջին ընդօրինակութիւնը՝ Չ. ըստ այսմ կրնանք ըսել թէ Տէր Եղիայի դէպքը մօտաւորապէս Ժ.Չ. դարու կէսէն մինչև Ժ.Ն. դարու կէսը պատահած անցք մըն է:

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ.

Շուշի, 1905 Մայիս 8.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Ղ Ի Ա Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի

1. Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի ձեզ՝ Քրիստոսի արեամբ գնեալ քահանայք և ժողովուրդք, վասն այդ մահատի Տէր եղիայ քահանայիդ, որ է զա ի քաղաքէն Խարբերգու և յազգէն Յահորայ ուղղափառ Ասորոց. 2. յազգէն սրբոյն Յահորայ Մճընայ հայրապետին և սրբոյն Արբայ Եփրեմն Խուրըն Ասորոց, և յազգէն Մխալիլ պատրիարքին և սուրբ Պարոամ ձգնաւորին, լաւ և ընտիր կարգաւոր, ժամաւէր և սաղմոսասաց, և զբոց գիտութեան հմուտ և ճարտարաբան:

1006
2906

3. Այլ ի սկզբանէ մարդկան թշնամն սասանայ յարոյց իորձանս ի վերայ սորա: 4. Եւ եղև զի չարացան ազգն Տաճկաց ի քաղաքին Խարբերգու և կամէին առնուլ զեկեղեցիսն քրիստոնէից: Եւ կայր ի Խարբերգ վեց եկեղեցի:

5. Ասացին Տաճկուներն թէ «Չեզ շատ է այդ եկեղեցիքդ.

1. Պ չունի ընդ Պ օրհնութեանն ծանուցում. Պ ծանուցումն յայտ ջ լինի. Խ Եւ ընդ... ժողովուրդք հասուածր այսպես կ'ընդարձակէ. Յայտ եւ ծանուցումն լիցի ձեզ հաւատացելոցդ յօ. եւ անբծ արեամբն գնեալ մէլոսքավիչ քահանայք եւ ածառէր ժողովուրդք ջ որ վասն Ս ալսմ ջ մահ գասի. Ս չունի ջ չունի աւեր Պ քահանայդ. Ս քահանայ ջ չունի զա ջ չունի եւ ջ ի ազգէն ջ չունի յակոբայ ջ չունի ուղղափառ. 2. Ջ Պ ջ չունի յազգէն ջ ի սրբոյն. Պ եւ ի սրբոյն. Ս ի սր ջ յակոբ ջ ջ հայրապետէն ջ Պ չունի եւ սրբոյն... իուրըն ջ ի սրբու ջ երբեմ ջ ի սրբոյն. Պ ասորոց. Ս ասորոց ջ ի յազգէն. Ս ի յազգէն ջ մարտի ջ պատրիարքէն. Ս պտիվրէն ջ սուրբ ջ բարոամ. Պ պարոամայ ջ ջ ձգնաւորէն ջ չունի կարգաւոր. ջ կարգաւոր է. ջ սաղմոսասէր. ջ վնխանակ լաւ եւ ընտիր... ճարտարաբան հասուածին՝ ունի ընդ որում ի պատվական եւ ազնիւ ազգէ լինելուն ի բարի ծառոց եւ բարի պտուղ լինելուն վնխ որոյ ունի սա ըզհրգնութիւնս լաւ եւ ընտիր եւ է ժամաւէր սրբբայաց պահեցող ճարտարաց բան եւ հմուտ ամ գրական գրոց զգիտութեամբ ունէր եւ ըզ տեղակութիւն ունի հարցման. եւ պտոսնոյ. 3. Ս այլ որ ջ թշնամի է. Պ հակառակ է զթշնամին ջ Ս վնխ որոյ վնխ. յարոյց ջ ըզգի ճանս. 4. Ս վնխ. եւ եղև զի՝ ունի որ յասոամ. Պ մխայն զի ջ ի քաղաքն. ջ քաղաքին ջ ջ առնել ջ զեկեղեցիքն. Ս զեկեղեցիս հայոց ջ եւ կար. Ս կար եւ ջ ջարբերգ. Պ ի յարբերթն. Ս ի քաղաքն յարբերգու ջ եկեղեցի յանուն սրբոց կառուցեալք. 5. Պ ձեզ ջ ջ շատ է ձեզ այսքան ջ զ եկեղեցիսն.



երեքն ձեզ հերկը է. և զերեքն կ'առնու՞մք. զերկուսն ամբար կ'անեմք և զմընն մղկիթ և մէտրէսէ, որ մեր սօֆդանին կարգանս:» 6. Զի զսուրբ Ստեփաննոսի և զսուրբ Կարապետի եկեղեցիքն կամէին ամբար առնել և պաքսու՞մաթ լնուլ. և զսուրբ Աստուածածնայ եկեղեցին, որ Ասորոց աղգին է, մղկիթ կամէին առնել: 7. Եւ բազում վիշտ և նեղութիւնս արարին ընդ քրիստոնեայսն:

8. Եւ տարան զՀայոց քահանայսն, զի բանիւ որոսացեն զնոսա: 9. Եւ ասացին թէ՛ «Դուք հանապազ զմեզ կու անարգէք և մեր Մուհամմատին փէղամպէր չէք ասեր: 10. զձեր եկեղեցիսն առնել պարտ է և զձեզ ի սուր քաշել և զձեր խարածն աւելի առնել և զձեր մեռեալն ի քարշ տանել, երեք օր թողուլ, ի մեծէ և ի փոքուէ միրաս առնել և ապա հրաման տալ թաղելու»: Այսպիսի բանիւ ահացուցանէին:

11. Եւ դարձեալ ասացին Տաճկուներն թէ՛ «Դուք Աստուած մէկ և փէղամպէրին հախ չէք ասեր»:

12. Յայնժամ քահանայքն ահիւ պահուցեալ ասացին թէ՛ «Մենք ալ այդպէս կ'ասեմք»:

Ս եկեղեցիք. Զ դ | Պ հերիք է ձեզի. Ս չորսն կամ էրէքն ձեզ բաւ է | Պ չունի եւ | Պ երեքն | Զ կառնու՞մք | Պ եւ երկուքն պէքսիմէթի անպար | Ս եւ զերեքն կառնու՞մք... ընդ քրիստոնեայսն հասուածին սեղ ունի՝ եւ կամէին զերկուսըն առնուլ ըզմէկն մղկիթ եւ ըզմիւսն մէտրէսէ անեմք որ սօֆդանին երգան կարգն որոց անուանք սրբոց ըստեփանոսի մէկն եւ միւսն սք կարապետի կառուցեալք էյին որ առան որ առնուլ կամէին եւ շինել մղկիթ վսն սրոյ բազում վիշտըս եւ նեղութիւնս հասուցանէին քրիստոնէյեց այնոցիկ: | Զ մէջիթ եւ մատրասայ | Պ փխ. եւ զմընն մղկիթ եւ ունի մէկն | Զ զմեր ստիտանին | Պ մեր սօֆտաներն. 6. Պ սուրբ | Զ ստեփանոսին | Պ սուրբ | Զ կարապետին | Պ եկեղեցին | Պ փխ. կամէին ամբար... կամէին առնել հասուածը վեաժած է. էք, անպար կանեմք ըսածնին. մէկն սուրբ Աստուածածնայ եկեղեցին էք որ մէտրէսէ ընեմք լսին. որ Ասորոց աղգին էք | Զ աստուածածինն | Զ մէջիտ. 7. Պ քրիստոնէիցս. 8. Ս յայնժամ փխ. եւ | Պ հայոց քահանայքն | Ս փխ. զի բանիւ՝ ունի ըզբանիւ եւ մոլոր ուսուցմամբ | Պ չունի որոսացեն զնոսա. Ս որոսացէն ըզնայ. 9. Պ որ փխ. եւ | Ս չունի հանապազ | Պ կանարգէք | Զ Ս չունին մեր | Զ մէհմէտին փէղամբար. Պ մուհամմէտին փէղամպէր | Զ ասել. 10. Ս անօր համար ձեր եկեղեցիքն առնուլ | Պ պարտ է ձեր եկեղեցին առնել | Ս չունի եւ զձեզ ի սուր քաշել. Պ ձեզ սուրէ քաշել | Ս չունի եւ | Պ ձեր. Զ չունի | Զ զխարձն | Զ չունի աւելի | Պ առնել աւելի | Պ մեռելն | Զ ի քաշ. Պ քարշ | Պ տանել | Ս չունի ի քարշ տանել | Զ եւ դ | Զ չունի օր | Զ թուղուլ. Ս տընէն չի հանիլ պարտ. է. Պ թողուլ եւ ապա թաղել | Ս մէծէն | Պ կամ փխ. եւ | Պ պղտիկէ. Ս փօքրէն | Զ մարաս. Պ մերաս. Ս միրասըն | Ս սորայ չիւան ձգել եւ քարշելով տանել թաղել պէտքայ եւ փխ. հրաման տալ թաղելու | Պ վստ կուտային. Ս ըսպանալեօք երկիւղ ցուցանէին նոցայ՝ փխ. բանիւ ահացուցանէին. 11. Պ չունի եւ | Ս ասէին | Զ Ս չունին տաճկուներն | Զ զաստուած. Ս այ | Զ ա փխ. մէկ | Ս ու | Զ ի փէղամպէրին. Պ փէղամպէր. Ս փու-

13. Դարձեալ ասացին Տաճկուներն թէ՛ «Ի՞նչպէս կ'ասէք»:

14. Ասացին քահանայքն Հայոց ահիւ. «Էսա Ալլահն զուլի գըր վէ Մէրիամ ճարեհասի ար վէ Մէհմէտ տէ ըւասուլ տը»: 1)

15. Յայնժամ ասաց անիրաւ զատին թէ՛ «Դուք այսպէս որ ասէք նա դուք լաւ քահանայ էք. ձեր եկեղեցիքն ձեզի բաշխել. լաքին զԱսորոց եկեղեցին կ'առնու՞մք»:

16. Եւ յորժամ զայս խօսքն լսեցին Հայոց քահանայքն, ուրախացան թէ զմեր եկեղեցիքն ի մեզ դարձուցին:

17. Յետոյ անիրաւ զատին վկայ եբեր կանգնեցոյց թէ՛ «Այս քահանայքս լաւ վկայութիւնս տուին. էհլի իման են սորա»:

18. Յետոյ ասացին Դանշմաները թէ՛ «Նէ՞ տէրսնիզ, քէ՛ շիշլար, պիզ տա տուեալըմ»: 2)

19. Հաւատացին քահանայքն և կրկնեցին զբանն և ասացին թէ՛ «Ալլահ պիւր, փեղամբեր հաղ. էսայ Ալլահն զուլի ար. Մէրիամ ճարեհասի ար. վէ Մուհամմատ ըւասուլ տը. վէ Ֆաթմա զափուճրսի տը»: 5)

զամպէրին | Պ հար | Զ ասել. Ս ասեր. 12. Ս եւ փխ. յայնժամ | Ս ի դէմ նոցայ աշիվ | Պ վախցան եւ. Ս պագուցեալ դողալով | Ս չունի թէ | Ս մէնք. Զ Պ մեր | Զ այլ. Պ չունի | Զ Պ այսպէս | Զ կու ասեմք. 13. Ս չունի դարձեալ... կասէք. | Պ քահանայից փխ. թէ. 14. Պ չունի ասացին. Ս եւ ասէն | Զ հայոց քահանայքն | Պ ահիւ թէ. Ս թէ | Զ յիսայ. Պ իսայ | Զ ալալուն | Պ քուլու. Ս օղի | Զ դուր. Պ սուր | Զ չունի վէ | Զ մարիամ. Պ մէյրէմ | Զ ճարեհասի. Պ ճարեհասի | Զ սուր. Պ տիր | Պ չունի վէ մէհմէտ արք ըւասուլ տը. Զ մէհմէտ ըստուլի դուր. 15. Ս անօրէն զատին ասաց | Պ խատին | Պ չունի դուր... ասէք նա | Ս չունի որ | Ս նէ | Ս չունի դուր | Զ քահանայք | Պ եկեղեցին | Զ ձեզ | Պ պաշտել. Ս բաշխեցինք | Զ չունի լաքին | Պ ասորոց | Զ եկեղեցիքն | Զ Պ կառնեմք. 16. Պ չունի եւ յորժամ | Ս չունի յորժամ... թէ | Պ խօսքս | Պ մեր. Ս մեր | Պ եկեղեցին | Պ մեզ, Ս յայնժամ առ մէզ | Պ դարձուցիմք. Ս դարձուցին եւ ալին. 17. Ս եբեր վրկայ | Պ բերաւ | Զ քահանայքն | Ս սորայ այլ իմանին. 18. Ս յայնժամ | Զ դանիշմաներն. Պ դանշմաներն. Ս տանջմաները. Դ թանիշմաները բաւով կսկսի | Զ նա. Դ նայ | Զ տէրսնիզ, Դ դնէրսնիզ | Պ քէշիշլար | Զ պիզտէ. Պ պիզտէ. Դ բիզ դայ | Զ տուեալում. Դ դոյալում. 19. Դ ասացին փխ. հաւատացին | Ս փխ. հաւատացին... թէ՛ միայն կրկնեցին թէ | Պ չունի թէ | Պ ալլահ | Դ բիր | Զ Դ փեղամպար. Պ փեղամպէր | Զ Դ հախ. Պ հաք | Զ յիսայ. Դ եսէա. Պ իսայ | Զ ալալուն. Դ ալալուն | Պ քուլու | Զ դուր. Պ Դ սուր | Զ մարիամ. Պ վէ մէյրէմ | Զ ճարեհասի. Պ ճարեհասի | Զ դուր. Պ տիր | Դ չունի մէրիամ ճարեհասի տը | Զ չունի վէ. Դ ու | Զ մէ-

1. Յիսուս Աստուծոյ ծառան է, Մարիամ աղախինն է և Մուհամմէան ալ տաքեալ է:

2. Ի՞նչ կըսէք, երէցներ, մենք ալ լսենք:

3. Աստուած մէկ է, Մարգարէն ճշմարիտ է, Յիսուս Աստուծոյ ծառան է, Մարիամ աղախինն է, Մուհամմէան ալ տաքեալ է, և Ֆաթման իւր զոնապանն է:

20. Եւ յորժամ լուան զայս տաճկունքն՝ միաբան աղա-
զահեցին թէ՛ «Այսպէս ասողն տաճիկ է. ահա զուր տաճկա-
ցար»։ 21. Բռնեցին Հայոց քահանայքն և եղին ի բանդ։ Եւ
թէ որչափ զխօսո այսր և անդր շրջել կամէին՝ ճար չեղաւ։

22. Յետոյ բերին զայս մեր հողեւոր որդին զՏէր Եղիայն,
որ թարգմանի Ասորոց լեզուէն Բապան Ելիայ։ 23. Եւ ասա-
ցին թէ «Քո ընկերքն տաճկացան, դժու այլ պիտի տաճկանաս,
որ եկեղեցիդ առնեմք»։

24. Յետոյ պատասխանեաց և ասաց թէ «Քաւ և մը՛ լիցի
թէ ես զՔրիստոս ուրանամ և տաճկանամ»։

25. Եւ դարձեալ ասէ Տէր Եղիայն. «Օլ քէշիշլար ակամախ
կտելէր վէ քիզապ ակիկնտան ասլայ աղնամաղ կտելէր. օն
ուչուն շարդ վէ իրխար էթմիշլար»։ 4)

26. Յետոյ ասացին Տաճկունքն թէ «Օնլար ակամախ կտի-
լէր, սան իլմտար ալիմ սըն. կէլ սանտայ միտլիման օլ, սանա
զիեատէ մանսուպ վէրալըմ»։ 5)

27. Եւ բազում հարց և փորձ մտեալ սորա՝ ասացին թէ
«Գուր քեաֆիր էք. երկու Աստուած կ'ասէք. զՔրիստոս Աս-
տուած և զՄարիամ Աստուածածին»։

Հումատ. Պ մուհամմէտ. Գ մահմատ. Ս կաւեյցիէ տախի | Ջ քէսուկի. Պ
քէսիւկ. Գ էրիսուկ | Ջ դուր. Գ տուր. Պ չուրի | Ս չուրի վէ Ֆաթմա դա-
փուճիսի տր. | Ջ Գ չուրից վէ | Պ քաբուճուսու. Գ դափուշի | Ջ տուր. Գ
տիր. 20. Պ չուրից եւ | Պ յայնժամ. Գ ուրժամ | Պ իմացան | Պ չուրից
զայս | Գ տաճկոնք. Պ տաճկունքն այս խօսքս | Պ միաբերան | Գ տաճկա
ահայ. 21. Ս ըմբռնեցին | Ս զհայոց | Ս քահանայ | Պ զբանտ. Գ ի բանդն |
Ս չուրի թէ | Գ եւ թէ որ ոչ տպըլտորհորհ. այստղ կր վերջանայ Գ | Վիս-
զխօսն... չեղաւ. Պ զխօսքն ասդին անդին շրջեցան որչափ կամեցան ճար
չեղաւ. Ս Զանացին եւ զղխօսքս իրեանց աստ եւ անդ դարձուցին նա ոչ
եղեւ ճար. 22. Ս չուրի զայս մեր | Պ չուրից որդին | Պ տէր | Ս որ ա-
սորոց լեզվաւ թարգմանի | Պ ըւ առ անենիայ. Ս ռաբբի անլիւն. 23.
Պ տաճկունքն թէ | Պ քու | Պ տաճկանան | Պ դուեալ | Պ եկեղեցիքն առնեք.
Ս մէնք զեկեղեցիսն ձեր առնուեք. 24 Ս յետոյ սա | Պ աէր եղիայն փիս.
Եւ ասաց | Պ չուրից եւ մի | Ջ չուրից թէ | Ս ոչ ուրանամ. Ս չուրի եւ
տաճկանամ | Պ ոչ ուրանամ զՔրիստոս | Պ ոչ տաճկանամ. 25. Ջ չուրի եւ
դարձեալ... եղիայն. իսկ Ս պարգապէս եւ ասաց | Ջ օ | Ջ քաշիշլար. Պ
քէշիշլար | Ջ իտելար | Վիս. վէ քիզապ... էթմիշլար՝ Ջ քիթապդան բիւ-
մազլար իտի. օն իչուն Ֆիշլար էթմիշլար. Պ քիթապտան պիւմէդ իտիլէր.
Օնուն իչին Ֆիրար էթմիշլար. 26. Ս յայնժամ փիս. յետոյ | Ջ չուրից թէ
| Վիս. իտիլէր՝ Ջ խայ, Պ իսէ | Պ սէն | Վիս. իլմտար ալիմ սըն Ջ ազիմի-
սան. Պ տէլի օլ | Ջ սան. Պ չուրի | Ջ մարման. Պ միւսիլման | Ջ սանդայ.
Պ սէն | Ջ զիեատայ | Ջ մանսուկ | Ջ վերալու. Պ վերելիմ սանա. 27. փիս.

4. Այն քահանաները անմիտ էին և զբքի լեզուէն բնաւ չէին հասկնար.
անոր համար պայման գրեր և խոստովաներ են։

5. Անոնք անմիտ էին, դու զիտնական ուսումնական ես. եկնոր, դժու
ալ մահմետական եղիր, քիզ մեծ աստիճան ասնք։

28. Սա այլ մտախորհեցաւ թէ՛ «Ես այլ այն քահանայից
նման ասեմ նա, զիս այլ կու բռնեն՝ թէ դու այլ տաճկացար»։

29. Եւ Աստուած ետուր իւրեան զօրութիւն և իմաստութիւն
և ասաց. «Եօիունդէ կէջինճէդ սըրարսընըդ, արանդա կէջինճէդ
թէփարսընըդ»։ 6)

30. Յայնժամ ասացին Տաճկունքն թէ «Պիղի իթ իլայ
էշմի մի էթտին. զիրա ըսըրան քէլի տր, թէփան աշակ տըր»։ 7)

31. Ասաց Տէր Եղիայն. «Պէն սիդայ պիւր չիֆդ ճէվապ ոօյ-
լաալըմ՝ քուֆոնը մի դուգթընըդ. եայ շիմտան սօրայ նայ շէ-
քիլ ոօյլիալըմ սիդ ինան»։ 8)

32. Ասացին Տաճկունքն թէ «Եայ նէ՞ տիր պունուն մա-
նասի»։ 9)

33. Ասաց տէր Եղիայն. «Ալահ պիւր, փեղամպէր հագ տէ-
յինճէ՛ աէրսընըդ քի մուսուրման օլտուն. վէ Եսայեա Ալլահ
տէյինճէ՛ աթաշա եագարսընըդ»։ 10)

34. Ասացին Տաճկունքն թէ «Նարթ դնեմք ի հեա քեդ և
երդուեմք որ գրով և քիթապով խօսիմք. եթէ դու դմեդ յաղ-
թես, նա քեդ պաշխիշ՝ քահանայքն այլ, եկեղեցիքն այլ. եթէ

Եւ բազում... սորա՛ Ս եւ այսպէս բազում հարցու փորց մէմալ վիճաբա-
նեցան եւ յետոյ | Պ եւ դարձեալ ասացին տաճկունքն թէ | Ջ քաֆուր | Ս
կամիք ասել | Ս կատէր եւ դմարիամն Ածածին կոտք 28. Ս սա ալ. Պ եւ
սա | Ս խորհեցաւ ի միտս | Ջ է փիս. ես | Պ Ս ալ | Պ չուրի այն | Ս պէտ
| Ս չուրի նա | Պ չուրի այլ. Ս ալ | Ս դուն ալ տաճկեցար. յետու չար
լինի. 29. Ս ետ եւր | Ջ Պ չուրից եւ իմաստութիւն | Պ եւ ասաց թէ. Ս որ
ասաց | Ջ օկընըդայ. Պ էօնիւնիւդէ | Ջ կէնճինճայ. Պ կէչսեմ | Ջ տիշլար
սընը. Պ տիշլարսինիկ | Ջ արտընդայ | Ջ դալինճայ. Պ կէչսեմ | Ջ թէփեր-
սընը. Պ թէփերսինիկ. 30. Ջ չուրի յայնժամ. Պ եւ | Ս ադ | Ջ լան. Պ իլէն
| Պ էշէք | Ջ չուրի մի | Պ էթին. Ս էիտին | Պ գէրէ. Ս չուրի | Ջ սրան | Ջ
քէլը | Ջ դուր. Պ չուրի | Պ վէ թէփէն | Ջ էշակ. Պ մէրքէպ | Ջ դուր. Պ
չուրի. 31. Ջ պան | Պ սիդէ | Ս սիդ. Ջ չուրի | Ջ պիֆթ. Ս չուրի | Ջ քէլամ
| Ջ սօլլատում. Պ սէօյլէտիմ | Պ օնու տայ քիւֆիւր. չուրի մի | Ջ տութ-
սընը. Պ սայտնդ | Ջ եա սիզընկիւն նէճայ սօլլալէլում. Պ եա սիզի իլէն
նիճէ սէօյլէշէիմ. 32. Ջ չուրի տաճկունքն թէ | Ջ Պ եա | Ջ նիճա դուր | Ջ
պունըն. Պ անն | Պ մանէսի. Ս մանայսի. 33. Պ ալլահ | Ջ փէղամբար. Պ
փէլլամպէր | Պ հար. Ջ հախ | Ջ տէեինճայ | Ջ տէերսընը | Պ փիս. տէրու-
նըդ... օլտուն՝ ուրի նիճէ միւսիլման օլտու տէյի սէօյլերսինիկ | Ջ օյտի | Ջ
ու փիս. վէ (այսպէս ցլիք) | Ջ յէյայսի եա. Պ իսա | Ջ ալլահ | Ջ տէեինճայ |

- 6. Եթէ անջննիդ անցնիմ՝ կը խածնէք, եթէ ետննիդ անցնիմ՝ կաքացէք։
- 7. Մեզի շուն ու է՛շ բըրը, քանի որ խածնողը շունն է, արացողը է՛շն է։
- 8. Ես ձեզ երկու բառով պատասխանեցի. դուք հայհոյանք համարեցիք.
Տապա ասկէ ետքը ի՛նչ ձևով խօսիմք ձեզի հետ։
- 9. Հապա ի՛նչ է ասոր նշանակութիւնը։
- 10. Եթէ Աստուած մէկ է, մարդարէն ճշմարիտ է ըսնք, մահմետական
գարձար կըսէք. և եթէ Քրիստոս Աստուած դուանինք՝ կրակով կայրէք։

մեր զբեղ յաղթեմք, նա զբեղ ի քո ընկերաց հետ տաճկացը-
նեմք»:

35. Յայնժամ ասաց Մկրտիչ վարդապետն և Յովհաննէս
Եպիսկոպոսն թէ «Թող այգւղէս լինի»: 36. Եւ քահանայքն և
ժողովուրդքն այլ ասացին թէ «Մեր վերելն Տէր Եղիայն է.
զի՛նչ որ դա կասէ, մեր այլ զայն կասեմք. թէ մեռանի և թէ
մնայ, ի հետն եմք»:

37. Յետոյ ասաց Տէր Եղիայն. «Այսօր ինձ մօճլազ տուէք.
վաղիւն դամ և խօսիմ ի հետ ձեզ զբով և քիթապով»:

38. Ասացին Տաճկուներն թէ «Թող այգւղէս լինի. զայնչ
եմք»:

39. Եւ զնացին վարդապետքն և Եպիսկոպոսքն և ամե-
նայն ժողովուրդքն ի գուռն սուրբ Աստուածածնայ եկեղեց-
ւոյն, և հսկում, պաշտօն և պատարագ արարին և աղաչեցին
զԱստուած թէ «Դ՛ն փրկեա զմեզ ի ձեռաց անօրինաց»:

40. Եւ ի վաղուեան առաւօտին եկին չավուշքն թէ «Շու-
տով եկէք. ամիրայն և զատին դիւան արարին և զձեզ կուզեն»:

41. Յայնժամ յուսացաւ յԱստուած այս Տէր Եղիայս և
զմահն յանձն էառ. զի գիտակ էր չորս ցեղ լեզու. արապի,

Ջ աթաշայ. Պ աթէշէ | Պ եագարսնդ. Ջ եախարսնդ. 34. Ջ նորա ասացին
թէ | Պ դարձեալ ասացին | Պ Ս շարդ | Պ ի յետ քեզի | Ս փխ. դնեմք... եր-
դուեմք որ ունի էալում սիզին կա | Պ երդուիմք | Ջ քիթաբով | Ջ խօսինք
| Պ եւ թէ. Ս թէ որ | Ս դուսն | Պ նորա քեզի | Ջ բաշխիշ. Պ պաղշիշ լինի
| Պ թէ փխ. այլ | Ս փխ. նա քեզ... եկեղեցիքն այլ՝ յայնժամ քահանայք
եւ եկեղեցին քեզ կու բաշխեմք | Պ եւ թէ | Պ մենք. Ս մէնք | Ս որ ըզքեզ
| Ս չունի նա | Ս քեզ. Պ չունի | փխ. ի քո՛ Պ քո. Ս ալ քու | Պ ընկերացող. Ս
ընկերացըն | Պ հետն | Պ տաճկցնեմք քեզ. Ս կու տաճկացնեմք. 35. Պ յայ-
ժամ | Ս չունի ասաց | Ջ չունի թէ | Ջ չունին թող | Պ այնպէս. 36. Ս
չունի եւ | Ս ժողովուրդքն | Պ Ս չունին այլ | Պ չունի ասացին | Ս մէզ | Ջ վա-
քելն. Ս վէքել | Ս եւ փխ. է | Ս ասէ դայ. Պ ասէ | Պ մենք ալ. Ս մէք եւս
| Ս այսեմք | Պ չունի եւ | Ջ մնա. Պ ասքի | փխ. ի հետն եմք՝ Պ ընդու-
նեմք ամենքս. Ս մէք ի նր հետ եմք ալ տր առաջնորդւ. 37. Ս յայնժամ.
Պ ինծի | Ջ մօլաթ. Պ մէօճլէթ. Ս մօլայդ | Ս որ ի վաղիւն | Պ չունի եւ. Ս
ալ կը | Պ Ս չունին ի հետ ձեզ | Պ զբբով ձեր հետ. Ս քիթապով. 38. Ջ Պ չու-
նին ասացին... զայիւ եմք. 39. Ս յայնժամ փխ. եւ | Ջ վարդապետն եւ
